



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 92-Ա

ք. Երևան

«ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության՝ հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման ԵՀ N 352 լիցենզիան վերաձևակերպելու մասին 2023 թվականի հոկտեմբերի 10-ի հայտը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

1. Բավարարել «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության հայտը և «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության անվամբ վերաձևակերպել «ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը 2023 թվականի սեպտեմբերի 22-ին տրամադրված ԵՀ N 352 լիցենզիան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ